Արձանագրություն N 4

**«Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար «ՎՀ-ԹԻՎ2-ԳՀԱՊՁԲ-01/26» ծածկագրով** գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30 հունվարի 2026թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

Սիլվա Դավթյան - «Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնտեսվար

***Հանձնաժողովի անդամներ***

Մարինե Բուդաղյան - «Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բուժքույր

Արմենուհի Գալստյան - «Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակ

***Գնումները համակարգող՝*** Նարինե Տիգրանյան

## Օրակարգ

1. Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՎՀ-ԹԻՎ2-ԳՀԱՊՁԲ-01/26» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 16.01.2026թ. «Մարտին և Կո» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծ, որի հաստատման և ներկայացման համար օրենքով սահմանված վերջնաժամանակը եղել է 2026թ. հունվարի 23-ը:

«Մարտին և Կո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 2026թ. հունվարի 23-ին Վանաձոր համայնքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին է ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որի տեխնիկական բնութագրերում կատարված են եղել արհեստական փոփոխություններ, մասնավորապես՝ Պայմանագրի նախագծով, որը սահմանված է եղել նաև հրավերի տեխնիկական բնութագրով և Մասնակցի կողմից հաստատված Հավելվածի 1.1-ով 36-րդ չափաբաժնի համար՝ «Նոր Զելանդական կամ համարժեք Անքոր» բառերը փոխարինվել են «Նոր Զելանդական, Անքոր կամ համարժեք» բառերով: Նմանատիպ փոփոխություններ կատարվել են նաև պայմանագրի այլ չափաբաժիններում, ուստի մասնակցին առաջարկվել է մինչև սահմանված ժամկետի վերջնաժամկետը պայմանագիրը հաստատել ներկայացված տարբերակով, կամ պայմանագրի նախագծով սահմանված այն չափաբաժինների մասով, որոնցում մասնակցի կողմից փոփոխություններ չեն կատարվել ներկայացնել առանձին պայմանագիր և ներկայացնել պատվիրատուին, որպեսզի պատվիրատուն հնարավորություն ունենա այդ չափաբաժինների մասով կնքի պայմանագիր, հակառակ դեպքում պայմանագիրը ամբողջությամբ չի կնքվելու պատվիրատուի կողմից, ինչն էլ համարվելու է, որպես ընտրված մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում: սակայն «Մարտին և Կո» ՍՊԸ-ն սահմված ժամկետում չի ներկայացրել պահանջվող պայմանագիրը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՎՀ-ԹԻՎ2-ԳՀԱՊՁԲ-01/26» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 12-րդ, 22-րդ, 29-րդ, 37-րդ, 55-րդ, 60-րդ, 65-րդ, 70-րդ, 77-րդ, 79-րդ, 105-րդ և 106-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած, իսկ 1-ին, 3-րդ, 8-րդ, 13-րդ, 72-րդ, 90-րդ և 103-րդ չափաբաժինների մասով, որպես հաջորդ տեղ զբաղեցրած և գնման գնից ցածր կամ հավասար գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչել «Տարոն Սուպերմարկետ» ՍՊԸ-ին, և առաջարկել կնքել համապատասխան պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Դավթյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ. Բուդաղյան

_____ Ա. Գալստյան

Գնումները համակարգող _____ Ն. Տիգրանյան